ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **18.12.2019թ.**
ժամը 10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ՋԲՖ ԿԾ պետ Ա. Պապյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:
Բացակայում էր ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ՋԲՖ ՇԲ առաջատար մասնագետ Ա.Սաֆարյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման, մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման, մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին

(Մ.Ամիրյան)

1.1 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի **04.12.2019թ.**-ին տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն **Ռ.Դ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «Յուզլիֆտ» ԴՍՊԸ**-ն/Մասնակից/ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

1.2 **02.12.2019թ.**-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը Armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակցը ուղարկել է վերը նշված փաստաթղթերը՝ որոնցում արձանագրվել են անհամապատասխանություն հրավերի պահնջների նկատմամբ, մասնավորապես.

-Սույն ընթացակարգի հրավերով սահմանված է, որ մասնակցի **«Մասնագիտական փորձառություն»** որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի **/14 817 600 ՀՀ դրամ/** հիսուն տոկոսից **/7 408 800 ՀՀ դրամ/**: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից **/2 963 520 ՀՀ դրամ/**:

Մասնակցի կողմից ներկայացված N ՄԱԾՁԲ-10-8 պայմանագրի ընդհանուր գումարային արժեքը կազմում է **3 704 400** ՀՀ դրամ, ինչը բավարարում է գնային առաջարկի քսան տոկոսը, սակայն պակաս է ներկայացված գնային առաջարկի հիսուն տոկոսից **/7 408 800 ՀՀ դրամ/**:

Իսկ ներկայացված N ԳՀԾՁԲ-10/6-1 պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց-ում նշված է որ պայմանագրի կատարման վերջնաժամկետը սահմանվում է մինչև 20.12.2019թ.:

Վերոնշյալ պայմանագիրը չի կարող դիտարկվել որպես պատշաճ ձևով իրականացրած համանման պայմանագիր, քանի որ Մասնակցի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /15.11.2019թ./ պայամանգիրը դեռևս ամբողջությամբ կատարված չէ:

09.12.2019թ.Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց **երեք աշխատանքային** օրով կասեցնել նիստը և գնումների համակարգողը ծանուցեց մասնակցին՝ առաջարկելով **մինչև կասեցման ժամկետի** ավարտը /10.12.2019թ.-12.12.2019թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Մասնակցը սահմանված ժամկետում ներկայացրել է **12.01.2018թ.**-ին **կնքված N ԳՀԾՁԲ-10/3-1** ծածկագրով պայմանագիր, որի ընդհանուր գումարային արժեքը կազմում է **14 817 600** ՀՀ դրամ: Պայմանագրին կից ուղարկվել է նաև պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունները, ակտերը, հաշիվ-ապրանքագրերը և կատարողական ակտերը, որոնց ընդհանուր գումարային արժեքը կազմում է **12 348 000** ՀՀ դրամ:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշեց, որ Մասնակցի կողմից որպես որակավորման չափանիշ ներկայացված՝ 12.01.2018թ.-ին կնքված N ԳՀԾՁԲ-10/3-1 ծածկագրով պայմանագիրը կնքված է եղել ՀՀ պաշտպանության նախարարության հետ, պատասխանատու ստորաբաժանում է հանդիսացել ՊՆ ԿԾ և ՁԲ վարչությունը, որի աշխատակիցներ են գնահատող հանձնաժողովի անդամները և տեղյակ են, որ նշված պայմանագիրը կատարվել է ամբողջությամբ՝ 14 817 600 ՀՀ դրամի սահմաններում, սակայն մասնակցի կողմից 2 միջանկյալ ամիսների հանձնման-ընդունման արձանագրություններ չի ներկայացվել:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով այն հանգամանքները, որ **Ռ.Դ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «Յուգլիֆտ» ԴԱՊԸ**-ն հանդիսանում է **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11»** ծածկագրով ընթացակարգի միակ հայտ ներկայացրած մասնակից և Մասնակցի հայտը մերժելու դեպքում ընթացակարգը կհայտարարվի չկայացած, որի արդյունքում սակայն չի վերանում գնման պահանջը և ՊՆ ՎՀ թվով 21 վերելակներ չեն կարող մնալ առանց սպասարկման, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց Մասնակցի կողմից **«Մասնագիտական փորձառություն»** որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը գնահատել հրավերի պայմաններին համապատասխանող /բավարար/:

1.3 **18.12.2019թ** Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց **Ռ.Դ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «Յուգլիֆտ» ԴԱՊԸ** -ի հայտը գնահատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11»** ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և սահմանված կարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11»** ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 16^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) _____ Ա. Մուրադյան

Գնահատող _____ Ա. Պապյան

Գնումները համակարգող _____ Մ.Ամիրյան

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆԻՆ

1852
24 12 19

Հարգելի պարոն Ղամբարյան

2019թ. դեկտեմբերի 18-ի Ձեր հանձնարարականի համաձայն ՀՀ ՊՆ իրավաբանական վարչությունում 20.12.2019թ. N 3251 համարով մուտքագրվել և ուսումնասիրվել է 18.12.2019թ. կայացած ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11 ծածկագրով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի N 4 արձանագրությունը, դրա վերաբերյալ հանձնաժողովի քարտուղարի զեկուցագիրը և կից նյութերը, որի արդյունքներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ սահմանված կարգի 27-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, անհրաժեշտություն է առաջացել ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունից ստանալ լրացուցիչ տեղեկատվություն: Այդ նպատակով ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության 20.12.2019թ. N 451 ելքային գրությամբ ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությանն առաջարկվել է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ՊՆ իրավաբանական վարչությանը տեղեկատվություն տրամադրել 2018թ. հունվարի 12-ին կնքված N ԳՀԾՁԲ-10/3-1 պայմանագրի (21.03.2018թ. N 1 համաձայնագրով հանդերձ) շրջանակներում «Յուգլիֆտ» ընկերության կողմից 2018 թվականի ընթացքում մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի գումարային արտահայտության (հանրագումարային ծավալի) չափի վերաբերյալ, ինչպես նաև հստակեցնել, թե նշված ընկերության հետ 2018թ. մայիս և հունիս ամիսներին մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման ակտեր ստորագրվել են, թե ոչ, ինչպես նաև այդ ամիսների համար պատվիրատուի կողմից վճարումներ կատարվել են, թե ոչ:

ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության պետի 23.12.2019թ. N ՊՆ 035/2023 գրությամբ ստացվել է պատասխան, համաձայն որի 2018թ. հունվարի 12-ին կնքված N ԳՀԾՁԲ-10/3-1 պայմանագիրը (21.03.2018թ. N 1 համաձայնագրով հանդերձ) «Յուգլիֆտ» ընկերության կողմից կատարվել է ամբողջությամբ՝ 14.817.600 դրամի չափով, պատշաճ, որակով և ժամանակին, ինչպես նաև ներկայացվել են 2018թ. մայիս և հունիս ամիսներին մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման ակտերն ու դրանց դիմաց պատվիրատուի կողմից կատարված վճարումները հաստատող փաստաթղթերը:

ՄՈՒՏՔ N 2958
«25» 12 2019 թ.
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՕՓՁԻ

ՄՈՒՏՔ N 2799
«25» 12 19 թ.
2136

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 27-րդ կետի 1-ին ենթակետի «բ» ենթակետը, հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11 ծածկագրով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի 18.12.2019թ. N 4 արձանագրությամբ կայացված որոշումն իրավաչափ է, քանի որ «Յուգլիֆտ» ընկերության կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի շրջանակներում ներկայացված N ԳՀԾՁԲ-10/3-1 պայմանագրի կատարման գործընթացն ապահովում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 61-րդ կետի 1-ին և 2-րդ կետերի պահանջները:

Լրացուցիչ հայտնում եմ, որ վերը նշված գործընթացը, այն է՝ ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունից անհրաժեշտ տեղեկատվության ստացումը, գնահատող հանձնաժողովն իրավասու էր նաև իրականացնել ինքնուրույն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 67-րդ կետի հիման վրա:

Կից ներկայացվում են Ձեր 18.12.2019թ. գրությամբ ստացված փաստաթղթերը՝ 31 թերթ, ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունից ստացված նյութերը՝ 5 թերթ:

Հարգանքով՝

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ

քիծ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք. Երևան

27.12.2019թ.
ժամը 17:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖ ԿԾ պետ Ա. Պապյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖ ՇԲ առաջատար մասնագետ Ա.Սաֆարյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարի կողմից պատվիրատուի ղեկավարին ներկայացրած զեկուցագրի հիման վրա հանձնաժողովի նիստի կասեցման և ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության կողմից ներկայացված եզրակացության մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարի կողմից պատվիրատուի ղեկավարին ներկայացրած զեկուցագրի հիման վրա հանձնաժողովի նիստի կասեցման և ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության կողմից ներկայացված եզրակացության մասին:

(Մ.Ամիրյան)

1.1 Հաշվի առնելով **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2019թ. 1.3 որոշումը /Արձանագրություն 4/ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 27-րդ կետը, նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից պատվիրատուի ղեկավարին ներկայացվեց զեկուցագիր՝ սույն ընթացակարգի հրավերի պահանջների և գնահատող հանձնաժողովի որոշման անհամապատասխանության վերաբերյալ **/կցվում է/:**

1.2 **25.12.2019թ.**-ին ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության կողմից ստացվել է եզրակացություն, որում մասնավորապես ասվում է. «....*հիմք ընդունելով* ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 27-րդ կետի 1-ին ենթակետի «բ» ենթակետը, հայտնում եմ որ *«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11» ծածկագրով գնման գործընթի գնահատող հանձնաժողովի 18.12.2019թ. N 4 արձանագրությամբ կայացված որոշումն իրավաչափ է.....»*:**/Կցվում է/:**

1.3 Հիմք ընդունելով վերոնշյալը հանձնաժողովը որոշեց հաստատել 18.12.2019թ. որոշման արդյունքները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը **16⁰⁰**-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Մուրադյան

Գնահատող Ա. Պապյան

Գնահատող Ա. Սաֆարյան

Գնումները համակարգող Մ.Ամիրյան